**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ն ստորև ներկայացնում է իր կարիքների համար ծրարների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/3-01/17» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2017 թվականի փետրվարի 03-ին կնքված N ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/3-01/17-8 պայմանագրում 2017 թվականի դեկտեմբերի 22-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝
Կողմերի մոտ անհրաժեշտություն է առաջացել փոխադարձ համաձայնությամբ պայմանագրում կատարելու փոփոխություններ՝ հաշվի առնելով Պայմանագրի 2-րդ չափաբաժնով նախատեսված և չմատակարարված 45980 հատ ծրարներից 39537 հատ ծրարների մատակարարման համար ֆինանսական միջոցների առկայությունը, այդ չափով մատակարարման անհրաժեշտությունը:

Փոփոխության նկարագրություն՝
Պայմանագրի N 2 հավելված հանդիսացող ԾՐԱՐՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ-ի 2-րդ չափաբաժնում ներառված ծրարներից թվով 39537 հատ ծրարների մատակարարման վերջնաժամկետ սահմանվել է մինչև 26.12.2017թ. ներառյալ:
Պայմանագրի N 3 հավելված հանդիսացող ԾՐԱՐՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ հաստատվել է նոր խմբագրությամբ:

Փոփոխության հիմնավորում՝
Պայմանագրի 4.1.2 և 9.4 կետեր:

Պատվիրատու՝ **«ՀՀ դատական դեպարտամենտ»** ՊԿՀ

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 3

## 03.02.2017թ. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ N <<ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/3-01/17-8>> ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «22» դեկտեմբերի 2017թ.

«<<ՀՀ դատական դեպարտամենտ>> ՊԿՀ-ն՝ ի դեմս ղեկավար Կ. Փոլադյանի, որը գործում է <<ՀՀ դատական դեպարտամենտ>> ՊԿՀ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Գնորդ>>, մի կողմից, և <<ՍԱՔԻ>> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Հ. Կարապետյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Վաճառող>> մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 03.02.2017թ. կնքված N ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/3-01/17-8 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 4.1.2 և 9.4 կետերը, 11.10.2017թ. կնքված թիվ 1 և 12.12.2017թ կնքված թիվ 2 համաձայնագրերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը՝ հետևյալի մասին.

## 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հաշվի առնելով Պայմանագրի 2-րդ չափաբաժնով նախատեսված և չմատակարարված 42180 հատ ծրարներից 39537 հատ ծրարների մատակարարման համար ֆինանսական միջոցների առկայությունը, այդ չափով մատակարարման անհրաժեշտությունը. կողմերը որոշեցին՝

1.1 Նախատված ֆինանսական միջոցներով Պայմանագրի N 2 հավելված հանդիսացող ԾՐԱՐՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ-ի 2-րդ չափաբաժնում ներառված ծրարներից թվով 39537 հատ ծրարների մատակարարման վերջնաժամկետ սահմանել մինչև 26.12.2017թ. ներառյալ:

1.2 Պայմանագրի N 3 հավելված հանդիսացող ԾՐԱՐՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N 1-ի:

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի՝ Պայմանագրով, 11.10.2017թ. կնքված թիվ 1 և 12.12.2017թ. կնքված թիվ 2 համաձայնագրերով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի հավելված N 1-ը հանդիսանում են N 2 համաձայնագրի անբաժանելի մասը:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ***«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ*** | ***«ՍԱՔԻ» ՍՊԸ*** |
| Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5 | Հասցե՝ ք. Գորիս, Անկախության 2/31 |
| ՀՎՀՀ՝ 02583241 | ՀՎՀՀ՝ 09213482 |
| Հ/Հ՝ 900011192151 | Հ/Հ՝ 1510019341900100 |
| ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն | «Արարատբանկ» ԲԲԸ |
| Ղեկավար՝ Կ. Փոլադյան | Տնօրեն՝ Հ. Կարապետյան |
| /ստորագրություն/ Կ.Տ | /ստորագրություն/ Կ.Տ |

Հավելված N 1

03.02.2017թ. կնքված N ԴԴ-ԾՀԱՊՁԲ-15/3-01/17-8 ծածկագրով պայմանագրի
22 դեկտեմբերի 2017թ. կնքված N 3 համաձայնագրի

## ԾՐԱՐՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| N | Ապրանքի անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը տարի |
| 1. | Ծրար | 424245 | 424245 | 1939407 | 1939407 | 1939407 | 3454569 | 3454569 | 3454569 | 9075000 | 9075000 | 9075000 | 9075000 |
| 2 | Ծրար,մեծ A4 ձևաչափի համար | 57153 | 57153 | 261273 | 261273 | 261273 | 498054 | 498054 | 498054 | 816480 | 816480 | 1856570 | 1856568 |
| 3 | Նամակի ծրար, A5 ձևաչափի | 139287 | 139287 | 636745 | 636745 | 636745 | 1213790 | 1213790 | 1213790 | 3256800 | 3256800 | 3256800 | 3256800 |

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

**ԳՆՈՐԴ**

***«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ***

Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5

ՀՎՀՀ՝ 02583241

Հ/Հ՝ 900011192151

ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

Ղեկավար՝ Կ. [illegible]

/ստորագրություն/

**ՎԱՃԱՌՈՂ**

***«ՍԱՔԻ» ՍՊԸ***

Հասցե՝ ք. Գորիս, Անկախության 2/31

ՀՎՀՀ՝ 09213482

Հ/Հ՝ 1510019341900100

«Արարատբանկ» ԲԲԸ

Տնօրեն՝ Հ. Կարապետյան

/ստորագրություն/